Հոկտեմբեր ամսվա կենդանաբանության լաբորատորիայի հաշվետվություն

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կենդանաբանության լաբորատորիա հաճախել են Նոր դպրոցի նախակրթարանների սաները, 3-5 տարեկանների 6 խումբ ամեն խումբը 18-25 երեխա:1-4-րդ դասարանների հաճախումները եղել են շատ քիչ՝ 2 խումբ, որոնց ընթացքում իմ կողմից ներկայացվել է կենդանիների վարքին և կենսակերպին վերաբերող համառոտ բացատրություններ, պատասխանել եմ բազմաթիվ ինչուիկների:5-6-րդ դասարանները լաբորատորիա հաճախում են շաբաթական 2 ժամ՝ 5 շաբաթյա ուսումնական ցիկլով:Խմբում լինում են 17-20 աշակերտ:Ծանոթանում են կենդանիների կենսակերպին բնության մեջ և անազատ պայմաններում:Իրենք կերակրում և խնամում են նրանց, տվյալ կենդանու մասին պատրաստում են նյութեր և ներկայացնում հաջորդ ժամին:Այս 5 շաբաթյա ուսումնական ցիկլի ընթացքում կարողանում են ծանոթանալ ընդամենը 5 կենդանու հետ, որը կարծում եմ շատ քիչ է լիարժեք պատկերացում կազմելու համար:

7-րդ դասարանի կենդանաբանության դասաժամեր չունեմ:8-9-րդ դասարանի 2 խումբ, 24 աշակերտներով շաբաթը 6 ժամ:Դասը ընթանում է ավելի խորացված:Բացի խնամքից և կերակրումից ծանոթանում են կենդանիների անատոմիական և ֆիզիոլոգիական հատկանիշներին:Ծանոթանում են այն պայմաններին, որը հնարավորություն է տալիս կենդանիների անազատության մեջ բազմանալուն: